№ 236 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 № 236

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրիմացութիւնները ցրեցէք. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Հայ յեղ. պրօկլամացիաները. Թիֆլիսի դէպքերը. Գանձակի դէպքերը. Երկաթուղու ծառայողների նիստը Դումայում. Ներքին լուրեր։

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՑՐԵՑԷՔ

Երէկվայ մեր յօդուածում յայտնեցինք, որ մեզ շրջապատող ազգերը սկսել գաղափար ունեն հայ ժողովրդի տրամադրութեան և հայեացքների մասին։

Այն ժամանակ, երբ մենք խեղդվում ենք զայրոյթից և կատաղութիւնից, որ հայ-թուրքական ընդհարումների պատճառով մենք անկարող ենք լայն չափով զբաղվել այն ազատագրական և վերանորոգչական գաղափարական գործերով, որոնցով ոգորված է պետութեան լաւագոյն մասը, այդ ժամանակ մեզ տրքնում են այնպէս դուրս բերել, որ իբր թէ մենք սիրահար ենք վնասակար, քայքայիչ և անմիտ ընդհարումների, որ մենք կամաւ զբաղում ենք և առաջացնում թիւրիմացութիւններ։

Զարմանալի է մարդկանց լոգիկան։ Զարմանալի է, որ ամեն օր ապրում են մեզ հետ, պատահում են մեզ, ուրիշներ ունեն խօսելու և տեղեկանալու ամեն բանի մասին. իսկ մէջ տեղից ինչ է դուրս գալիս, որ մեզ շրջապատողները նոյնքան են մեզ ճանաչում, որքան մենք Պարագվայի բնակիչների գործերը։

Բայց պետող մի ուրիշ հանգամանք էլ կայ։ Եւ ահա ինչ հանգամանք։ Վերջին ժամանակներս որքան էլ մեզ շրջապատողները ուզում են թափ տալ իրանցից հին ըէժիմի տարածած յաւերը, որքան էլ իրանց ազատ են համարում նախապաշարմունքներից, բայց նրանք նոյն տարուներն են հին ըէժիմի աշխարհայեացքի և թուրքակի պէս կըրկնում են այն, ինչ որ նրանց թելադրել են, ինչ որ ներշնչել են։

Մի ժամանակ հին ըէժիմի համար անհրաժեշտ էր հայերին ներկայացնել իբրև մի վնասակար տարր և վտանգաւոր ոյժ։ Եւ ամբողջ ըէժիմը իր բոլոր ճիշտագրութիւններով հաւածում էր հային։ Այժմ հասարակութեան համար հին ըէժիմը ստիճանաբար վարկաբեկ է դառնում, բայց մարդիկ չեն կարողանում ինքնուրոյն մտածել, ինքնուրոյն կշռադատել իրականութեան փաստերը և ամօթալի սարկամութեամբ կրկնում են նոյնը հայերի վերաբերութեամբ, ինչ որ մի ժամանակ ներշնչել է հին ըէժիմը։

Բայց ցաւալի է հետևեալ երևոյթը։ Մեր երկրում տպվում են ռուսերէն լեզուով մամուլի օրգաններ։ Նրանք մինչև այժմ չը կարողացան գաղափար տալ Կովկասում ապրող ազգերի և տրամադրութիւնների մասին։ Նրանք նոյն իսկ չեն կարողանում գաղափար տալ և այն տրամադրութիւնների մասին, որոնք երևան են գալիս հայ մամուլի էջերում։ Եւ այն ժամանակ, երբ հայ մամուլի էջերում անդադար լսվում են կովկասեան ազգերի համերաշխութեան կոչերը և քարոզները, մենք ականատես ենք, ինչպէս մեր տեղական ռուսերէն լեզուով լոյս տեսնող մամուլը կարծես համաձայն է այն սուտ կարծիքին, թէ հայերը և հայ մամուլը նպատակ է ընդհարումների զարգացման և նոյն իսկ ներշնչում է յարձակողական գործողութիւններ։

Եթէ ամեն մի խոշոր թիւրիմացութիւն կարող է պատասխանատու հետևանքներ ունենալ, կարևոր է, որ մեր երկրի ռուս մամուլը ամեն ջանք գործ դնէր թիւրիմացութիւնները չքացնել և այդպիսով նպաստել արդարութեան գործին։

Դա կարևոր պարտաւորութիւն է, որի անհրաժեշտութիւնը ընդգծում ենք։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասի Փոխարքայի անունով ուղարկված է Շուշից, երէկ, նոյեմբ. 29-ին, ժամը 9-ին առաւօտեան հետևեալ հեռագիրը, որի պատճէնը ուղարկված է և մեզ.

«Քաղաքի դրութիւնը կրիտիքական է։ Ամեն օր կատարվում են սպանութիւններ։ Կատարված են խմբական յարձակումներ Խանաքէ և Խրամուտ հայ գիւղերի վրա։ Եւլախ—Շուշի և Շուշի—Գերուսի տրակը աւազակային խմբերի ձեռքին է։ Հաղորդակցութիւնները ընդհատված են։ Եկող չը կայ և ուտելիք ևս չեն բերում։ Կենսական պաշարները սպառված են։ Սով է սպառնում։ Բօլէն կրիտիքական է։ Հաճեցէք հրամայել իրական միջոցներ ձեռք առնելու, տրակտը ապահովեցնելու և տեղական գօրնիզօնը ուժեղացնելու համար։

Հայ հասարակութեան ընտրեալ՝ Մէլիք-Շահնազարեան։

—

Փոխարքայի պալատում ստացված մի քանի հեռագիրներ յայտնում են, որ

1) Գանձակում դրութիւնը շատ լարված է և հաշտութեան պայմանների կնքումը շատ դանդաղ են ընթանում.

2) Զանգեզուրի գաւառում, իբր թէ 10 հայ գիւղեր միաբանելով յարձակվել են մի թուրք գիւղի վրա և սպանել 70 թուրք.

3) Կարսի գծի վրա հայերը իբր թէ յարձակվելով մի գնացքի վագոնի վրա, սպանել են ուղևոր թուրքերին։

Սակայն այս վերջին լուրը ճիշտ չէ. մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ ոչ թէ հայերն, այլ թուրքերն են յարձակվել գնացքների վրա, բայց վագոնում գինուորված հայեր կարողացել են պաշտպանվել և կուի ժամանակ սպանվել են 4 թուրքեր։

—

Մեզ հաղորդում են հետևեալը. «Նոյեմբ. 27-ին Ծաղկէվանքի վանահայրը, վերցնելով իր հետ իր մդդուսն, ոտքով ճանապարհվում է դէպի յիշեալ ուխտատեղին։ Հասնելով Վարքաբ եկեղեցուն, նրանք նկատում են բազմաթիւ զինված թուրքերի, որոնք երկիւղ կրելով այդ եկեղեցին պաշտպանող զօրքից, չէին համարձակվում յարձակվել եկեղեցու վրա։ Ինդրելով զօրքի սպայից 2 պահակ, վանահայրը և իր մդդուսն գնում հասնում են Ծաղկէվանք և նրանց աչքերի առաջ բացվում է մի զարհուրելի տեսարան.—թուրքերը չը կարողանալով կոտրել եկեղեցու դռան ամուր փականը, սրերով կտրում են դռները և ներս խուժելով եկեղեցին, վանդալական ոճրագործութիւններ են կատարում սրբութիւնների հետ։ Կոտրտում և պղծում են եկեղեցու անօթները, գողանում են բոլոր զարդերը, կոտրտում և փշրում խաչերը ու թափում յատակի վրա... Բացի դրանից կողոպտել և թալանել են մինչև վերջին թելը վանահօր և մդդուսի տրները»։

—

Վերջապէս հրդեհի դէպքն էլ հանդէս եկաւ։

Ինչպէս կարելի էր թիֆլիսը առանց հրդեհի թողնել։ Նա եղել է Բաքուում, եղել է Նախիջևանում, Շուշում, Գանձակում։ Պէտք է նա լինէր և Թիֆլիսում։ Եւ եղաւ։

Հրդեհի ենթարկվեց նախ Թիֆլիսի վեցերորդ քաղաքամասում գտնվող Եղիազարեանի տունը։ Այդ բանի մասին իմաց տուին հրդեհաշէջ վարչութեան։

Հրդեհաշէջները իրանց գործիքներով և պարագաներով շտապեցին հրդեհի տեղը։

Բայց հանդիպեցին խոչընդոտների թուրքերի կողմից։

Մենք պատմում ենք եղելութիւնը այնպէս, ինչպէս յայտնել է հրդեհաշէջների պետը ոստիկանատանը։

Հրդեհաշէջների պետը տեսնելով, որ Շէյթան-Բազարի կողմից ճանապարհները փակված են պատնէշներով կամ բարրիկադներով, գնում է Կուկիայի կողմով և անցնում է կամուրջով։ Մօտենալով այրվող տանը, նա պատուիրում է հրդեհաշէջ փողարին փչել փողը, իսկ ինքը դիմելով զինված թուրքերի մի խմբի, հարցնում է.

—Ճանաչում էք թէ ես ով եմ։

—Այո, ճանաչում ենք, պատասխանում է մէկը թուրքերից, դուք հրդեհաշէջ էք։

—Շատ լաւ է, որ ճանաչում էք, որովհետև ես պարտաւորութիւն ունեմ կատարելու. պէտք է հանգցնեմ հրդեհը և դուք չը պէտք է խանգարէք։

Այդ ժամանակ այս ու այն կողմից պարզվում են եղել հրաձիգներ։

Թուրքը յայտնում է, որ պէտք է հարցնել իրանց ղէլաւորից։ Հրդեհաշէջների պետը դիմում է թուրքի ցոյց տուած ղէլաւորին։ Թուրքերը փոքր ինչ խորհրդակցում են, հարցնում են թէ ում տունն է այրվում և յետոյ պատասխանում են, որ նրանք թոյլ չեն տայ հանգցնելու։

Հրդեհաշէջը թողնում է գործը և շտապում է ոստիկանատուն զեկուցանելու այդ մասին։ Հէնց այդ միջոցին մի կազակ գալիս է ոստիկանատուն և յայտնում, որ Փոխարքայի հրամանով ուղարկվում է հրդեհի տեղը 100 կազակ օգնելու հրդեհաշէջներին և նրանց պատսպարելու։

Հրդեհաշէջների պետը շտապում է դէպի այրվող տունը։

—

Ժամի 3-ին հրդեհ նկատվեց Շէյթան-Բազարի մօտ գտնվող մի քանի խանութներում։

Բարեբաղդաբար քամի չը կար և հրդեհը կարելի էր մի որոշ ատիճան կըղզիացնել։

Կարևոր է արձանագրել, որ երէկ և թէ նախընթաց օրը նկատվել են չարամիտներ, նաւթի սրուակներով պատում են եղել քաղաքի զանազան տեղերը և աշխատում են եղել կրակ գցել։ Երէկ Միջին փողոցի շրջանում բռնվեցին երեք խուլիգաններ, որոնք նպատակ են ունեցել հրդեհ առաջացնելու։

—

Թիֆլիսի ինքնապաշտպանութեան գործին մասնակցում է նաև հնչակեանների մի կազմ, որ աշալուրջ կերպով հսկում է իր զբաւած դիրքերի վրա և պատրաստ է ըստ առաջին պահանջի իր բոլոր ոյժերը գործի դնելու։ Մխիթարեան է արձանագրել, որ ինքնապաշտպանութեան խմբերի մէջ տիրում է հաւասարութիւն։

—

Թիֆլիսում ստացվել են հետևեալ հեռագիրները.

Ախթալա, 26 նոյեմբերի։ Անդրկովկասեան երկաթ. կառավարչին. «Ծայրայեղ երկիւղալի դրութիւն է։ Կայարանը շրջապատված է թուրքերի և հայերի գիւղերով։ Ինդրում ենք անյապաղ պաշտպանութիւն»։

Սանահին, 26 նոյեմբերի։ «Դրութիւնը ամեն մի ըօպէ երկիւղալի է դառնում։ Լուրերին նայելով, թուրքերի առաջապահ շարքերը երևացել են Սանահինի մօտ։ Հարկաւոր է անյապաղ օգնութիւն, որովհետև կայարանը բոլորովին անպաշտպան է և երկաթուղու գծի պահապանները փախչում են»։

Սանդաթ, 26 նոյեմբերի։ Անդրկովկասեան երկաթ. կառավարչին. «Կայարաններին երկիւղ է սպառնում։ Շրջապատված են թուրքերով։ Շուրջը ամբողջապէս թալանել և հրդեհել են։ Ծառայողները թողնում են կայարանը։ Դրութիւնը անել է։ Բարեհաճեցէք առաջին գնացքով օգնութիւն հասցնել»։

Սօղանլուխ, 26 նոյեմբերի։ Անդրկովկասեան երկաթ. կառավարչին. «Երրորդ օրն է կայարանում սպանութիւններ և թալանումներ են կատարվում։ Դիակները թափթփված են։ Ծառայողները ստիպված են թողնել կայարանը։ Դուրս գալու ոչ մի հնարաւորութիւն չունենք։ Ինդրում ենք անյապաղ զօրք ուղարկել»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Երէկ մենք հաղորդեցինք թէ ինչ անտակտ և անարդար վարմունք է թոյլ տուել իրան «Արշալոյս» լրագիրը սօցիալ-դեմօկրատների վերաբերմամբ, որոնք Թիֆլիսի հայ-թուրքական ընդհարումների ժամանակ այնքան անձնազոհ հերոսութիւն են ցոյց տուել իբրև չէզոք, խաղաղացնող տարր. «Кавказ. Рабоч. Лист.» թերթում տպված է սօցիալ-դեմօկրատի պատասխանը հայ լրագրի այդ անարժան արարքի դէմ։

Ամաչեցէք դուք, հայեր, որ հայերէն լրագրի մէջում էք այդ խաղաղարարներին։ Զէ՞ որ այդ խաղաղարարները իրանց արիւնն են տալիս իրանց տառնձած միասիայի համար։ Զէ՞ որ այդ խաղաղարարները, հրացան վերցնելով, հասկանում էին թէ իրանց կեանքը պիտի տան խաղաղութեան համար։ Ամաչեցէք դուք, որոնց պաշտպանում է այդ խաղաղարարը, ամաչեցէք դուք, որ հասկանում էք կատարածի ամբողջ սարսափը ձեր ժողովրդի համար։

Դուք տեսնում էք որ սօցիալ-դեմօկրատները կառավարութեան հետ միասին են խաղաղացման գործի մէջ։

Բայց մի՞թէ դուք կոյր ու խուլ էք, որ չը տեսաք և չը լսեցիք նոյեմբերի 23-ին թէ ինչպէս Թիֆլիսի պրօլետարիատը սօցիալ-դեմօկրատիայի հրաւէրով գործադուրս և պնդց Օրթաճալա, պատրաստ իր դիակներով ծածկել ճանապարհը դէպի խաղաղութիւն ձեր և թուրքերի մէջ։ Մի՞թէ կառավարութեան հետ համաձայնվելով էր նա այդ անում։ Եւ մի՞թէ նոյն գիշերը սօցիալ-դեմօկրատիան իր բոլոր զինված ոյժերը չը հանեց խաղաղութիւնը պահպանելու համար։

Եւ երբ սօցիալ-դեմօկրատներին զէնք առաջարկեցին ազգաբնակութեան պաշտպանութեան համար,—դուք համարձակվում էք ասել թէ նրանք համաձայնութիւն են կայացրել կառավարութեան հետ։ Ամաչեցէք, եթէ դեռ ամօթ ունէք։

Պիտի ամաչեն, ի հարկէ, այն հայերը, որոնք այսպիսի մի ժամանակ սիրտ և ախորժակ են ունեցել այս տեսակ անմտութիւնների գրգռվելու։ Եւ մենք հաւատացած ենք, որ նրանք արդէն բաւական ամաչած կը լինեն Բօժդէն Սաուրուայի անշնչացած դիակից։ Փառք և պատիւ նահատակներին։ Նրանց ամբիծ արիւնից պիտ ծլէ ծաղկէ համերաշխութեան, եղբայրութեան շուշանը...

*

Այս զժբախտ օրերում նորից ճանչել սկսեց վրացական թթուած, բորբոսած նացիոնալիզմը։ «Իվերիայի» մէջ պահանջում են, որ քննութիւն կատարվի հայ «Դաշնակցութեան» կատարած դերը պարզելու համար։ Մի՞թէ այդ դերը դեռ ծածուկ է վրացի ազգամոլներից։ Մի՞թէ այս սգաւոր օրերում այդ կազմակերպութիւնը քաղաքի ամբողջ ազգաբնակութեան աչքի առջև չէր իր բոլոր գործերով։ Ի՞նչ հարկաւոր է կոյր ու խուլ ձևանալ։ Բայց եթէ վրաց ազգամոլները կամենում են, որ Դաշնակցութեան դերը լուսաբանվի այնպէս, ինչպէս իրանք են ուզում նացիոնալիստական կուրութեան պահանջներից դրդված, այն ժամանակ էլ ինչ հարկաւորութիւն կայ դիմելու ուրիշներին, որ քննութիւն կատարեն։ Ահա, փառք Աստուծու, կայ ինքը, «Իվերիան», որ արդէն դատել էլ է, վճիռ էլ արձակել։ Էլ ինչ էք ուզում, պ. պ. նացիոնալիստներ...

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊՐՕԿԼԱՄԱՑԻԱՆԵՐԸ

Նոյեմբերի 23—29 Դաշնակցութիւնը հրատարակել է հետևեալ յայտարարութիւնները.

I

Այս դառն ու արիւնալից օրերում Հ. Յ. Դաշնակցութիւնը նորից կոչ է անում հայ ու թուրք ժողովրդին։ Նա դիմում է ձեզ, աշխատաւոր ժողովուրդ, ձեզ, որ ձեր կրծքի վրա տանում էք ասնձիքի ու ցաւի բեռը, ձեզ, որ քամում էք դաւաճանների ու սոխագործների եղբայրասպան յանցանքի դառնութիւնը։ Եւ տասն ամիս է. տասն ամիս է, որ սկսուել է եղբայրասպան կռիւը, երկուստեք ոչնչացումը, տասն ամիս է, որ մեր հայրենիքի ամեն մի անկիւնում, ինչպէս մի փոթորկի, անցնում է աւերածութիւն, հրդեհ, թալան ու կողոպուտ։

Նոյն փոթորիկն է, որ այսօր կախված է նաև Թիֆլիզի հայ ու թուրք ազգաբնակութեան գլխին սպառնալով այնքան անմեղների։ Հեռվից է այսքան անմեղ զոհեր ու արիւն, որի դէմ բողոքում է մարդկային զգացմունքը ու խիղճը։

Երեկայ ու այսօրուայ դէպքերի ու զոհերի առթիւ մենք յայտնում ենք մեր ցաւն ու վիշտը։ Միաժամանակ կոչ ենք անում երկու ժողովուրդներն էլ չկորցնել սառնարիւնութիւնը ու չդնել ոճրագործ պրովոկացիայի։

Թիֆլիսի հայ յեղ. Դաշնակցութեան Կենտրոնական կոմիտէ.

23 նոյ.

II

Հայ Յեղ. Դաշնակցութեան Թիֆլիսի Ինքնապաշտպանութեան Կենդրոնական Մարմինը խաւեր պատիրում է, որ ոչ ոք չը ենթարկուի անցորդներին խուզարկել, զէնքերը խլել կամ բռնել և բանտարկել, եթէ նրանք հարցած՝ անկարգութիւն չեն անում կամ զէնքը հանած՝ խռովութեան և յուզմունքի տեղիք չեն տալիս։

Զինուորական դատի կենթարկուեն մեր զինուորներից նրանք, որոնք հրաշէջ կըպարպեն անմեղ և խաղաղ քաղաքացիների վրա։

Հայ Յեղ. Դաշնակցութեան Թիֆլիսի Ինքնապաշտպանութեան Կ. Մարմին։

23 նոյեմբեր։

III

Թիֆլիսի ազգաբնակութեանը։

Երէկ 23 նոյեմբերի, ամբողջ օրվայ ընթացքում Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի կազմակերպութիւնը իր բոլոր ոյժերով աշխատեց զսպել ժողովրդական զայրոյթը և բոլոր առաջ վերջ տալ այս վրդովեցուցիչ սպանութիւններին։ Եւ շնորհիւ դրան յաջողվեց ամբողջ գիշերը խաղաղ անցնել։ Առաւօտ վաղ կազմակերպութեան կամաւորները յորդորում էին ազգաբնակութեան խանութները բանալ և սովորական զբաղմունքներով պարապել։ Ժամը 8½-ին մի խումբ հայեր մտան թուրքաց թաղը, հաւաքելով թուրքերին սկսեցին համոզել նրանց, որ վերջ տան կռուին, որի վերաբերմամբ կայացաւ համաձայնութիւն։ Այդ խօսակցութիւնից յետոյ թուրքերը կամաց-կամաց հեռացան հայերից և երբ հայերը մեացին առանձին, շրջակայ թուրքերի տներից յանկարծակի հրացանաձգութեան ընդեցին փողոցում գտնվող հայերին և սպանեցին մէկին ու վիրաւորեցին 3-ին։

Այսպէս ուրեմն մի անգամ ևս մեր դրացի թուրք ամբոխը դաւաճանեց իր խօսքին։ Սրանով պարզ է, թէ ում վրա է ծանրանալու դաւիճ ազգէնների պատասխանատուութիւնը։

24 նոյ. Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կոմիտէ

IV

Ի նկատի ունենալով երէկ քաղաքում պատահած մի շարք սպանութեան և կողոպուտի քսմտելի դէպքերը, հարկ ենք համարում յիշեցնել հասարակութեան, որ ինքնապաշտպանութեան նպատակն է միմիայն պաշտպանվել, երբ տեղի կունենայ յարձակում խաղաղ ու անմեղ քաղաքացիների անձի և գոյքի վրա։ Վնասել անմեղ ու խաղաղ քաղաքացիներին, բարբարոսների վայել միջոցների դիմել՝ թալանել, կողոպտել ու հրդեհել ամենախիստ կերպով արգելվում է։

Իսկ մեր զինուորներին հրամայում ենք հեռուից ու ձերբակալել յանցաւորներին և յանձնել Կ. Կոմիտէին։

Նոյ. 24. Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կենտրոնական կոմիտէ։

V

Յայտարարվում է ի գիտութիւն Թիֆլիսի հասարակութեան, որ ոչ ոք իրաւունք չունի «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» անունից որ և է գործում անելու հասարակութեանը, եթէ չունի օրինական կնքված վկայական։

Կարևոր ենք համարում նորից շեշտելու, որ հայ հասարակութիւնը պէտք է իր զէնքը միայն ինքնապաշտպանութեան համար գործածի։ Խստիւ արգելվում է զէնքը ի չարը գործ դնելը կամ ցուցամոլութեան առարկայ դարձնելը, որովհետև այդ հակասում է ինքնապաշտպանութեան սկզբունքին։

Հայ Յեղ. Դաշնակցութեան I կենտր. Կոմիտէ։

27 նոյեմբեր։

VI

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ նա ստացել է ռուսաց սօցիալ-դեմօկրատական բանուորական կուսակցութեան Թիֆլիսի կոմիտէից հետևեալ ծանուցումը.

«Ի նկատի ունենալով, որ թուրքերը բացէ՛ն պատերազմական գործողութիւններ, որ արտայայտվեց նրանց հրաձգութեամբ մեր պահակների վրա առանց որ և է առիթի մեր կողմից, որի ժամանակ սպանվեց մէկը և վիրաւորվեց երկուսը մեր ընկերներից, մենք վերցրինք մեր պահակները և դրանով վերացնում ենք մեզանից որ և է պատասխանատուութիւն ապագայ դէպքերի համար»։

Եւ այսպէս Ս.-Դ. կուսակցութեան ջանքերը՝ վերականգնել խաղաղ յարաբերութիւններ թուրքերի և հայերի մէջ ապարդիւն անցան դժբաղդաբար։ Եւ այդ փաստը մի անգամ ևս ապացուցեց, թէ թուրքերը ամեն տեղ և միշտ յանձն առած բարոյական պարտաւորութիւնները երբէք դէն չեն ունեցել։ Եւ այս անգամ ևս ազգերի եղբայրութեան և խաղաղութեան գաղափարի համար կռվող Ս. Դ. կուսակցութիւնը միւս յեղափոխական կազմակերպութիւնների հետ միասին հանդիպեց խշնդոտի ագրէսսիվ արամադրված թուրք խուժանի կողմից։

Հայ Յեղ. «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը բոլոր ջանքերը գործ կը դնի հարկաւոր դիմադրութիւնը անելու թուրքերի ագրէսսիվ գործողութիւններին։ Միևնոյն ժամանակ նա յայտնում է, որ մեր կուսակցութեան կողմից ձեռք առնվող բոլոր ակտիվ միջոցների միակ նպատակն է խաղաղութիւնը շուտափոյթ վերականգնել և դադարեցնել այն բռնութիւնները, որ թուրքերի պատերազմիկ մասը գործում է խաղաղ ազգաբնակութեան դէմ։

Այդ պատճառով Դաշնակցութիւնը յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի.

1. Ամեն մի բռնութիւն խաղաղ և անզէն թուրքերի վրա կը հալածվի, իսկ նրանց գոյքը թէ խանութներում և թէ տներում կը պահպանվեն։

2. Ընդհարումների շրջանից դուրս զինուորված թուրքերը մինչև խաղաղութեան վերականգնումը զինաթափ կանվեն մեր կուսակցութեան կոմիտէից լիազօրութիւն ունեցող անձանց ձեռքով։

3. Մինչև թուրքերի կողմից յարձակումները դադարեցնելը նրանց անցնելը, չէզոք շրջանից պատերազմական շրջանը չէ թոյլատրվում։

28 նոյեմբ. 1905 թ.

ԹԻՖԼԻՍԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ

(Շարունակութիւն)

(Նոյեմբերի 25, 26, 27 և 28-ը)

Նոյեմբերի 25-ը։ Լոյս 25-ի գիշերը խաղաղ անցաւ։ Ցերեկը լուր բերին, որ 500-ից աւելի զինված թուրքեր Բօրչալուի գաւառից եկել և Նաւթլուղի գէվերը բանակ են դրել։ Այն կողմում կան դրաւններ, բայց նրանք ոչ մի մէջոց չեն ձեռք առնում այդ բարբարոս հօրդան ցրելու։ Պարզ երևում է, որ զօրքերին կրկին հրամայված չէ խխտ միջոցների դիմելու թուրքերի դէմ։

Ժողովուրդն իր երևակայութիւնն սկսում է ուռեցնել, մեծացնել թէրն ու վտանգը։ Բօրչալուից եկած 500 մարդը դառնում է 5000, 10,000 զինված ձիաւոր թուրքեր...

Փողոցներում սկսում են շրջել սօցիալ-դեմօկրատական պատրուքերը, սպիտակ նշանները թեւերին։ Դաշնակցականները, սօցիալիստ-յեղափոխականները և ֆեդերալիստները նոյնպէս սկսում են կրել սպիտակ՝ վրան կապոյտ աստղով նշաններ։

Դեռ նախընթաց օրը զօրապահակներից մէկի օֆիցէրը, ազգով թուրք, բարձրանում է Բօտանիքական բլրի գլխին դաշնակցականների բռնած դիրքերը, խլում կամաւորներից 3 բերդան, 2 մաուզէր և 1 խանջալ, տալով էլ դուրս քշում դիրքերից, օգտվելով այն բանից, որ յեղափոխական կազմակերպութիւններից ոչ մէկը նպատակ չունի կուլուր զօրքերի դէմ։

Թիֆլիսում կայծակի արագութիւնով տարածվում են չափազանցրած լուրեր. «հայերին դիրքերից քշում են, հայերին զինաթափ են անում»։ Եւ հայ հասարակութեան սիրտ սկսում է ճմլել մի կասկած. «ուրեմն՝ կառավարութիւնը կրկին բռնեց մութ ուժերի, թուրքական սրիկայական տարրերի կողմը, որպէս զի ճգմէ մի կուլտուրական ժողովուրդ»։

Բեթդեհեմի, Խարբուխի, ս. Գէորգի և միւս թուրքական մասերին կից հայ թաղերից անմիջապէս եկան պատգամաւորներ Դաշնակցութեան վարիչ մարմնի մօտ և բացարձակ յայտնեցին, որ «եթէ մեր տղայքը թողնեն զիրքերը, մենք այդ թաղերից իսկոյն կը գաղթենք»։

Եւ դեռ գտնվում են մարդիկ, որոնք յանդգնում են անուանարկել կամ արհամարհել Դաշնակցութեան ոյժը և բարոյական ազդեցութիւնը։ Հայ ժողովրդի համար ներկայ օրերում չը կան զինուորներ և ուրիշ պաշտպանութիւն. նա վստահ է, երբ կայ վստահելի մարմին—Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Զէնքեր խլելու առիթով անմիջապէս դիմում եղաւ Թիֆլիսի կօմենդանտ գեներալ Բիլսկուն։ Նա հրամայեց իսկոյն վերադարձնել թուրք-օֆիցէրի խլած զէնքերը, այսուհետև ոչ մէկին դաշնակցականներից զինաթափ չանել. հեռագրեց այդ թուրք օֆիցէրին քաղաքի այդ մասից և զինուորներ ուղարկեց Բօտանիքական բլուրի գիրքերը, որպէս զի հայ տղաները չդգուրվեն և կրակն սկսեն առաջինը։ Սակայն հրամայվեց զինուորներին հայերի հետ միասին կրակ անել, եթէ թուրք սրիկաներ սկսեն յարձակվել։

Սօլօլակից էլ մի խումբ հայ կանայք գնացին Փոխարքայի մօտ, նոյնպէս խնդրեցին, որ դաշնակցականներին ձեռք չը տան, զիրքերից չը հանեն և զինաթափ չանեն։

Նոյն ձևի մի տխուր միջադէպ պատահեց քաղաքի մի ուրիշ մասում էլ։ Դաշնակցականները, խրատված կուսակցութեան ղեկավարների բազմաթիւ ճառերից, թուցիկներից ու յորդորանքներից, զէնքը ձեռքերին ուղեկցում էին այն բոլոր թուրքերին, որոնք անցնում էին հայոց թաղերով։ Նրանք աւելի քնքշաբար էին վարվում մանաւանդ պարսկահպատակների հետ, որպէս զի հայ սրիկաներ (որոնց թիւը դժբաղդաբար բաւական շատ է—մանաւանդ ջրի պղտորված այս վատ բօպէում) ձեռք չը տան անմեղ ու խաղաղ մարդկանց՝ դիմակաւորվելով յեղափոխական որ և է կուսակցութեան անունով։

Բայց յանկարծ լուր տարածվեց, որ պարսից հիւպատոսարանում զրաղունները զինաթափ են անում դաշնակցութեան խաղաղարար մարդկանց։

Կրկին աղմուկ, յուզում, իրարանցում։ Իսկոյն ձեռք առնվեցին միջոցներ և ամեն ինչ հանդարտվեց, կրկին «մեր տղայքը» շարունակեցին կառքերով ու ոտով ուղեկցել անմեղ ու խաղաղ թուրքերին դէպի հիւպատոսարան, դէպի կայարան և դէպի իրանց տները։ 3—4 օրվայ ընթացքում դաշնակցականները փրկեցին առնուազը 25—300 պարսկահպատակների կեանքը։

Դեռ նախընթաց օրը լուր ստացվեց, որ զանազան սրիկաներ—հայ, վրացի, ռուս,—կողոպտել են անմեղ թուրքերի խանութներ (2 խանութ) և մի տուն։ Բացի դրանից՝ լուր բերին, որ միքանի սրիկայ հայեր կտրատել են թուրք դիակների ականջներ, խփել են բոլորովին անմեղ անցորդների և այլն, և այլն։

Դեռ նախընթաց երեկոյեան որոշեցին դաշնակցականները քաղաքի զանազան մասերում մօտ 15—20 տեղ միխիդներ կազմել, յորդորել հայ հասարակութեան, որ ձեռք չը տան անմեղներին, չը կողոպտեն, գազանութիւններ չանեն։ Բոլոր ճառախօսները խնդրում էին հասարակութիւնից պատժել այդպիսի խուլիգանական վարմունքներ թոյլ տուող հայերին կամ անմիջապէս յանձնել դաշնակցականների ձեռքը։

Եւ յիրաւի, 25-ի առաւօտվայ ժամը 11-ից սկսվեցին մեր ու խոշոր միխիդները քաղաքի բազմաթիւ մասերում։ Այդ միխիդներն ունեցան իրանց բարերար ազդեցութիւնը հայ հասարակութեան վրա։

Երևանեան հրապարակի վրա կազմած միտինգում տեսանելի բազմութիւն կար։ Խօսում էին գլխաւորապէս դաշնակցականները, յետոյ նաև ուրիշ կուսակցութիւններից անձեր։ Միտինգի էկսին քաղաքագլխի պաշտօնակատարը և մի քանի ճառախօսներ դուրս եկան քաղաքային տան պատշգամբը։ Քաղաքագլուխը մի փոքրիկ ճառով յայտնեց, որ Փոխարքայի մօտ խորհուրդ է տեղի ունեցել և կայացրել են հետևեալ որոշումները. 1) կազմել փոխարքայի մօտ մի խորհուրդ, բաղկացած 2 հայից, 2 վրացուց, 2 ռուսից և 2 թուրքից. այդ խորհրդի նախագահը լինելու է Զուսկովսկին, Փոխարքայի դիւանի անդամը։ Դրա զբաղմունքի առարկան լինելու է հայ-թուրքական յարաբերութիւնների վերջ դնելու հարցը։ 2) Ոստիկանութիւնը դնել քաղաքային վարչութեան տրամադրութեան տակ։

Քաղաքագլխից ու ճառախօսից յետոյ բարձրացաւ դաշնակցութեան ներկայացուցիչներից մէկը, քննադատեց այդ երկու որոշումները, ապացուցեց, որ դա ևս «կէս-միջոց» է, որ դա ևս մի նոր ձևի խաբէութիւն է, որովհետև թուրքական մասի հայ խանութները կողոպտվում են, Դաշնակցութիւնը չէ ուզում ինքը միջամտել, իսկ կառավարութիւնը լուռ հանդիսատես է լինում այդ ամենին... «Նոր խաբէութիւն, քնացնելու նոր միջոց—զգայլ եղէք քաղաքացիներ, խաբված, արհամարհված քաղաքացիներ։ Կառավարութիւնը, անիծեալ բիւրօկրատիան դեռ չէ յագեցել հայի անմեղ արիւնով... դեռ նա ուզում է թափել մեր արիւնը, որպէսզի յեղափոխական բոլոր տարրերին զբաղեցնէ դրանով, թոյլ չը տայ մտածելու ուրիշ հարցի մասին։ Բայց բոլոր կուսակցութիւնները միացած են գործում և թող հայերն աշխատեն զսպել հայ մութ մարդկանց վարմունքը։ Կեցցէ Դաշնակցութիւնը»։ Եւ անկեղծ, սրտի խորքից բղխած «կեցցէն» թնդացրեց Թիֆլիսի փողոցները, արիւնոտ ու ցաւագար մարդկային սրտերը։

Ճառերը շարունակվեցին։ Դուրս եկան նոյն իսկ մի քանի տղայամիտ մարդիկ, որոնք քիչ էր մնում ծրագրային հարցեր քննէին այդպիսի արիւնոտ րօպէներում և այդպիսի ժողովրդական միտինգում։

Ցանկարծ ուշադրայի պատուհանից մի պաշտօնեայ բղաւեց. «այնտեղ, Վօրոնցօվսկի փողոցում կռտորում են»։ Ժողովուրդը, որ յատկապէս սիրում է փախչել ու սարսափել Երևանեան հրապարակում, Եաղկեվիչի հոսեցրած անմեղ արիւնի վայրում,—իսկոյն սկսեց ցրվել, փախչել։ Վերկացան երիտասարդները և սկսեցին թատրոնական ձևերով «իզէն, քաղաքացիներ» բղաւել. իսկ դա աւելի ևս մեծացրեց սարսափը։

Մի քանի հոգի ներս վազեցին ուպրաւա բռնելու այդ պրովոկատօր պաշտօնեային, բայց նա արդէն փախել

ներ էին անում, վճիռներ կայացնում, իսկ միւս կողմից նրանց վճիռները գործադրում էին զինված խմբերը։ Անպայման զրուցեան տէր Դաշնակցութիւնն էր, որի հետ համերաշխութեամբ գործում էին միւսները։ Սոցիալ-դեմոկրատիան ստացել էր 500 հրացան և նոր կազմված պահակները շրջում էին կանոնաւոր զօրքերի նման։

Դումայում ժամը 3-ին նիստ կայացաւ։ Կառավարիչին ընտրութիւններ Փոխարքայի նոր խորհրդի համար։ Ընտրվածների անունները արդէն յայտնի են, ես աւելորդ եմ համարում յիշել։

Ցերեկով Թիֆլիս հասան երկաթուղու գծերի վրայից հայ գիւղացիներ, որոնք պատմեցին նոր ու նոր թուրքական սարսափներ. կողոպտում, կոտորում են ոտի ելած թուրքերը. նրանք ամէն տեղ նախայարձակ են լինում։ Եկան Բօրչալուից, Շուլաւերից, Ղարա-Եազից, Ղազախից և ուրիշ տեղերից։ Բոլորն էլ զէնք էին ուզում, բոլորն էլ անձնապաշտպանութեան միջոց էին խնդրում։

Լուր տարածվեց, որ Կօտա, Թէլէթ, Կումիս և մի երկու մօտակայ գիւղերի տուել են հրացաններ. և իսկապէս տուել էին ու հետևեալ առաւօտ էլ շարունակեցին բաժանել։

Շուլավերին էլ խոստացան 250 հրացան. պարզ ու որոշ կերպով՝ վաղը ժամը 3-ին... բայց... յետ կացան չը տուին։

Փոխարքայի նոր ընտրված խորհուրդը նիստ ունեցաւ այդ գիշեր, որ տեղ մինչև գիշերվայ ժամը 3-ը։ Այդ նիստը քննութեան է ենթարկել... և այն, որ Դաշնակցութիւնը չը պէտք է դիրքեր պահպանէ, զինված պատրուլներ պահէ... նա թող Թիֆլիսը թողնէ... Բուսական է որ և դ.-ներին տրվեց զէնք, էլ Դաշնակցութիւնն ինչի՞ է հարկաւոր...

Երբ կառավարութիւնը չէ կատարում իր անմիջական պարտքը, հասարակութիւնն ստեղծում է մի նոր օրգան, այդ նոյն պաշտպանութիւնը ցոյց տալու բնակիչներին ապահովելի յարձակման դէմ. կառավարութեան թափուր թողած գործը կատարում է մի նոր օրգան։ Եւ այս արիւնոտ տարում Հ. Յ. Դաշնակցութիւնն է եղել հայի պաշտպանը, նրա յոյսն ու ապաւէնը։

Թող կառավարութիւնը դանայ ընտրվիլ, թող նա կանգնի իր կոչման բարձրութեան վրա և Դաշնակցութիւնն ու սոցիալ-դէմոկրատիա կրնաւվին և կողմանն լոկ քաղաքական կուսակցութիւններ եւրոպական մտքով։

Նոր «բարձ խարհուրդը» մի լաւ բան է որոշում, որը, սակայն, լոյս աշխարհ չըտեսած՝ հոգին փչեց։ Դա այն է, որ խորհուրդն անհրաժեշտ գտաւ զինել գիւղական համայնքները, զէնք տալ այն տարրերին, որոնց վրա յարձակում է լինում և որոնք կարիք ունեն պաշտպանվելու։

Թուրք ներկայացուցիչները ժողովի չէին գնացել, եթէ ոչ նրանք ամենայն անարեխղճութեամբ կապացուցանէին, որ հայերն են յարձակվում թուրքերի վրա և թուրքերին պէտք է զէնք տալ... Եւ երևի նրանց ներկայութեամբ նահանգապետն ու միւս բիւրօկրատները տարբեր զիրք կը բռնէին. նրանք կը համաձայնվէին, որ պէտք է զենել արդէն լաւ զինված թուրքին—և փառս ինքնավարութեան և բիւրօկրատիայի։

Այդ երեկոյեան լուր առացվեց, որ Կովկասեան գլխաւոր շտաբում շտաբի օֆիցէրները ժողով են արել և բազմաթիւ ճառեր են խօսել, թէ պէտք է զէնքերը յետ խլել ս.-դ.-երից և ժողովրդից, թէ դա անպատուութիւն է իրանց համար, թէ իրանք հակառակ դէպքում պատասխանատու չեն ծագելիք անկարգութիւնների համար և այլն... ժողովը որոշել էր հետևեալ օրը կամվել օֆիցէրների մի միանգ և այդ խնդիրը քննութեան դնել։

Դիշերը խաղաղ անցաւ։ Սոց.-դէմոկրատական և դաշնակցական պահակները դիրքերում և փողոցներում իսկական եղբայրների նման շրջում և հսկում էին։

Նոյեմբերի 26։ Խաղաղ անցաւ ամբողջ օրը։ հրադադրութեան և ոչ մի զէպք տեղի չունեցաւ, բայց յուզմունքներով ու զէպքերով լիքն էր այդ օրը։

Առաւօտեան ժամը 5-ին ս.-դէմոկրատական պահակի առջևով անցնում և քաղաք են մտնում Բօրչալուից եկած 150 թուրքեր, 30-ը լաւ զինված, մնացածներն բան երևոյթին անզէն։

Այդ առաջին փառը հասաւ Դաշնակցութեան ականջին—ս.-դ.-երը պաշտօնապէս յայտնեցին։

Թիֆլիսի առաջնորդարանում, ուր է և Հայոց Գլխաւոր Կաթողիկոսը, տեղի ունեցաւ ժողովներ։ Բոլորն էլ «զէնք» էին բաղձում, զէնք, անձն ու գոյքը պաշտպանելու, զէնք՝ թշնամու աւերից յարձակումը յետ մղելու։

Եւ այդ խեղճ մարդիկ կարծում էին, որ բարեխնամ կառավարութիւնը զէնք կը տայ... Նա արդէն հասկացել է, որ հայի զինվելը պետութեան շահն է, իսկ թուրքի զէնքը վերջ ի վերջոյ պետութեան դէմ է դառնալու... Հայ ժողովուրդը, հոգևորականութիւնը, բուրժուազիան արդէն համոզվել էին, որ «կառավարութիւնը հասկացել է, պօլիտիկան դէպի հայերը փոխել»...

Բայց... Լսեցէք։

Ժամի 11-ին կայացաւ օֆիցէրների միտինգը։ Ներկայ էին մօտ 300 հոգի... սակայն ոչ բոլորն էլ օֆիցէրներ. կային և բանական թիվ հայատեաց չինովնիկներ. խուլիգանական տենդենցիայով ճառում էին ուելի երիտասարդ օֆիցէրները, սակայն ընդհանուր հաւանութիւն չէին գտնում։ Նրանք աշխատում էին ապացուցանել, որ 1—2 ժամում ամբողջ Թիֆլիսը քարուքանդ կանեն...

Սակայն ի պատիւ օֆիցէրական մարմնի, պէտք է ասել, որ այդ խուլիգանական ճառերը լսեցին և ուելի մարդավայել տարրերը ուելի խելացի ճառեր ասացին և դուրս բերին հետևեալ որոշումները։

1) Դադարեցնել զէնքի բաշխումը ժողովրդին, որովհետև դա կոչում է զօրքի և օֆիցէրների պաշտօն, 2) հիմնել օֆիցէրների համար մի լրագիր, որով կարելի լինի պաշտպանվել այն բոլոր անարդար մեղադրանքների դէմ, որ բարդվում են զինուորականների վրա։

Անիծեալ որոշում... ի հարկէ միայն առաջին կէսը։ Այդ որոշումը կայացողների խղճի վրա, եթէ նրանք խիղճ ունեն, ծանրանալու է շատ անմեղ մարդկանց հոսեցրած արիւնը գաւառներում։

Շուլավէրցիները պատրաստվում էին տասնալ արբէնալից իրանց հասանելիք 250 հրացանը, և յանկարծ այդ որոշումը հանում է պաշտօն... Անմիջապէս դադարեցնում են զէնքերի բաժանումը և ժամը 3-ին շուլավէրցիներին զէնք չեն տալիս..

Հաւուանծ՝ ուրեմն՝ ուղղված էր յատկապէս հայ գիւղերի դէմ... Գոնէ տուժողը նրանք եղան։ Եւ ռուսական բանակի Թիֆլիսում գտնվող օֆիցէրները պատճառ դարձան—պատճառ անմեղ մանուկների, անմեղ մարդկանց արեան... պատճառ ներքին կոտրածի։

Այո, ես մեղադրում եմ այդ որոշումը։ Մեղադրում եմ, որովհետև եթէ թուրք տարրը տեսնէր, որ կառավարութիւնը մի քիչ զէնք է տալիս քրիստոնեայ տարրին՝ կը զսպէր իր էկսեց աւելին կազմող աւազակ ու խուլիգան տարրերը։

Այդ անհաց լուրը ցոյց տուեց թէ որքան արդէն քաղաքացիական վարչութիւնը—նահանգապետը, փոխարքայի օգնականը, նոր թեկնած խորհուրդը և այլն,—անզօր են։ Այդ լուրը չափազանց յուսահատեցնող տպաւորութիւն գործեց բոլոր ժողովրդի և մանաւանդ հայերի վրա... Ուրեմն՝ հաղթականութիւնը չի փոխվել։ Դա արդէն պարզ էր ամենքի համար։

Երեկոյեան դէմ մի անախորժ լուր էլ եկաւ։ Սոցիալ-դեմոկրատների պաշտօնական լրագրը յայտնեց, որ 200 լաւ զինված թուրքեր Սօղանլուխի ճանապարհով ներս խուժեցին Թիֆլիս և կանգ առան բուժարանի առաջ, Եղիպարօվի տան մօտ։

Դաշնակցութիւնը լսեց այդ, բայց արհամարհեց 200 կամ 2000 զինված մարդկանց ուժը Թիֆլիսի նման քաղաքում։ Միայն կուսակցութեան համար մի բան մեծ նշանակութիւն ունէր. թուրքերը ներս են բերում դրրոսից զինված աւազակային տարրեր—ուրեմն՝ տրամադիր են կողոպտելու, յարձակվելու։

Պէտք էր պարզել այդ բանը, որպէս զի այլ ևս «Т. Лист.»-ի նման մի թերթ, կամ «Возр.»-ի նման սոցիալիզմի ու ֆէդերալիզմի դիմակը հագած շովինիստական լրագիր չը համարձակվեն մեղադրել հայերին... որպէս զի մի ուրիշը չը յանդգնի հնարել, անամօթ կերպով ստեղծել փաստեր «Իզվէստիայում» և մեղքը գցել հայերի վրա...

Զուրը պղտորված է և շովինիստ զուլի տարրերն աշխատում են հոն հաշիներ մաքրել, մրցակցին հարուածելու աշխատել...

Դումայի ձայնաւորները նշանակել էին մասնաւոր խորհրդակցութիւն և հրաւիրել բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներին։ Գնացին և Դաշնակցութեան 3 ներկայացուցիչները։

Առաջուց պէտք է ասեմ, որ այդ բոլոր խորհրդակցութիւններն ու ժողովներին ներկայ չէր լինում և ոչ մի թուրք։ հաւաքվողները, խորհրդակցողները մենք էինք, հայ, ռուս վրացի,—քիչ ու միչ կուլտուրական տարրերս—իսկ թուրքերն արհամարհում էին թէ այդ բոլոր ժողովները, թէ «չէկոզ», «խաղաղարար» սոցիալ-դեմոկրատական բերդանաւոր խմբերը... Նրանք պատրաստվում էին ճակատամարտի, նրանք ներս էին բերում, Բօրչալուից աւազակ ու վայրենի տարրեր։

Ձայնաւորների խորհուրդը ուպրաւայի դահլիճում սկսվեց, բայց ժողովուրդը պահանջեց անցնել դումայի մեծ դահլիճը։ Բոլորն անցան այնտեղ։ Ժողովուրդը լիքն էր։ Անհնարին հեռաբրքրում էր մեր ձայնաւոր-աղաների կարծիքը, նրանց անելիքը։ Երկար խօսցին, ճառեցին... Արդիւնքը եղաւ այն, որ պէտք է գնալ Փոխարքային խնդրել, որ անմիջապէս հեռացնել տայ զրսից եկած աւազակ տարրերը և դադարեցնէ այս անմիտ յարձակողական պատրաստութիւնները թուրքերի կողմից։

Ձայնաւորները գնացին խնդրելու... կրկին խնդրելու...

Փոխարքայի մօտ զինուորական խորհուրդ կար։ Ձայնաւորներին 2 ժամ սպասեցնելուց յետոյ բարեհաճում է դուրս գալ Փոխարքայի խորհրդի անդամ Պետրոսեանը և բացարձակ հերքել, որ այդ օրը Թիֆլիս չեն մտել ոչ 150, ոչ էլ երևոյթեան 200 զինված թուրքեր... Հերքում, դրական, կտրուկ հերքում։ Ձայնաւորներին իրանց միջից երկուսին—մի վրացի և մի հայ,—ուղարկում են, որ գնան VI քաղաքամասը, հաստատ իմանան և գան։ Իսկ մի ուրիշ ձայնաւոր գալիս է դուռս, մեզ—այնտեղ մնացած անգլին հասարակութեան մօտ, որ նստել շարունակում էինք վէճերս, սպասելով «խնդրողների» վերադարձին։ Գալիս է ձայնաւորը, վրդովված ու շշկլված հաղորդում, որ Պետերսօնը հերքում է ներս խուժելու լուրը և յայտնում, որ «ամեն ինչ բարեյաջող է»։ Ժողովականները ծաղրում են այդ սոլիթանական ֆորմուլան. «չնորհ վեհափառ սուլթանի՝ ամենայն ինչ կանոնաւոր է...»։

Փոխարքան վերջապէս ժամը 12-ից անց ընդունում է ձայնաւորներին և յայտարարում, որ այո, եկել են դրսից թուրքեր... Մինչև անգամ յայտնի է դարձել թէ զրանք որ գիւղերից են եկել...

Փոխարքան էլ նոյն սովորական բառերով հանգստացնում է ձայնաւորներին. միջոցներ ձեռք են առնված, հանգիստ եղէք... յեղափոխականներին զէնք ենք տուել... նրանք են մեղաւոր և այլն, և այլն...

Բոլորիս համար պարզ էր, որ պատրաստվում են արիւնոտ բարդութիւններ. բայց թէ, թէ ինչ ձևով, ոՀվքեր են մատ-խառնողները—չըգիտէինք և այդ անգիտութիւնը մեզ ուելի էր անհանգստացնում։

Նոյեմբերի 27-ը։ Դիշերը խաղաղ անցաւ, առաւօտ նոյնպէս։ Կեանքն իր վերջին օրերի կերպարանքն ունէր. մարդիկ խառնված իրար, փողոցներում շրջում, խօսում, վիճում, անհանգիստ, նեարդային դրութեան մէջ դէս ու դէն էին վազում։

Փոխարքայի մօտ կազմված խորհուրդը մի նիստ ունեցաւ, որի որոշումը մի քիչ գործադրվեց, իսկ երկրորդ նիստը չըկայացաւ...

Տեղի ունեցան մի քանի միջկուսակցական, մասնաւոր, ընդհանուր և այլ տեսակի խորհուրդներ։ Բոլորի նպատակն էր հաստեցնել... Բայց բոլոր այդ ժողովները կարծես կոյր էին—չէին տեսնում, որ իսկապէս յարձակվելու տրամադիր կողմը—թուրքերը—չեն մասնակցում ոչ մի ժողովի, այլ միայն զէնք են բերում, դիրքերն ամրացնում, մարդիկ հրաւիրում... Կարծես կոյր էին այդ խաղաղարարները, չէին տեսնում, որ հայն ամենևին տրամադիր չէ յարձակվելու, տրամադիր չէ զաղանութիւններ անելու...

Դիշերվայ ընթացքում պատահեց մի շատ ընորոշ դէպք։ Սօցիալ-դեմոկրատական պահակը, սպիտակ նշանը թևերին, սպիտակ դրօշները հրացանների ծայրերին՝ շրջում էին թուրքական մասում։ Մի թէյատնից դուրս է գալիս մի պաstաւոր թուրք և քաղցր լեզուով խնդրում ներս դալ, թէյ խմել, մի քիչ տաքանալ։ Տղայքը ներս են մտնում, հրացանները վայր դնում, թէյ խմում և նոյն իսկ պլովնոտարիսաի եղբայրութեան մասին խօսում, համերաշխութիւն քարոզում։

Թէյը խմում, վեր են կենում գնալու։ Հրացանները չը կան, տարել են, գողացել։ Պահանջում են։ Պատասխան են ստանում, որ դրադատները եկան տարան։ Ադմուկ, իրարանցում. «Թուրք եղբայրները» խփում վիրաւորում են «միջազգային եղբայրներից» երկուսին... Սրանք հավիս փախչում, գալիս են իրանց գիրքերը, մարդիկ մէջ գցում և թուրքերն ստիպված են լինում զողացած 5 հրացանները յետ տալ։

Այդ դէպքն արդէն բաւական խոշոր զժգոհութիւն էր առաջացրել ս.-դէմոկրատների զինուորների մէջ. ֆանատիզմական հատատակամութիւնն անդրդվելի էր շէֆերի, կոմիսէտի անդամների մէջ, բայց եկան դէպքերը, իրար վրա բարդվեցին և ամենամոլեռանդին անգամ սtիպեցին հաւատալ, որ թուրք տարրի անագին մեծամասնութիւնը դաւաճան է, խուլիգանական ոգի ունի... որ այդ տարրերն են եղել սկսողներ, արիւնհեղութեան պատճառները... որ հայը կօրբկա է եղել...

Այո, նրանք ստիպված եղան հաւատալ, որ Թիֆլիսում հայերն անմեղ են, որովհետև վերջին երեք օրը սոցիալ-դեմոկրատները դաշնակցականների հետ միասին էին ցերեկ-գիշեր, ամեն բան տեսնում, հսկում էին նրանց բոլոր քայլերը... Եթէ նոյն իսկ կային հրէշներ, որոնք կարծում էին թէ հայերն են եղել մեղաւոր Բաքուի, Շուշու, Գանձակի, Երևանի, Նախիջևանի դէպքերում՝—այժմ այդ հրէշներն անգամ ստիպված կը լինեն գոնէ կարմրել, լռել...

Ճաշից յետոյ, ժամը 4-ի մօտերը թուրքերը յանկարծակի յարձակվում են խաղաղարար սոցիալ-դեմոկրատների վրա, խփում սպանում են 1-ին, վիրաւորում 2-ին և ծեծելով խլում 4-ի ձեռքից հրացանները։

Սկսվեց... կրկին, կրկին սկսվեց...

Տեսնել այդպիսի հերոս, բարոյական քաջութեամբ լի անձերի ընկնելը... տեսնել ընկերների արիւնաթաւալ դիակները... Եւ սկըսեցին ամեն կողմից գնդակները տեղալ դաւաճան, տասր դաւաճան թուրքերի վրա։

Ժամը հինգ 4½ էր։ 3 սոց-դէմոկրատներ պարսկահպատակներ էին տարել հիւպատոսարան և Երմօլովսկի փողոցով իջնում էին դէպի պրօսպէկտ։ Յանկարծ սուլում են գնդակները... Ասում են Թիֆլիսցոյ կօզակներն են եղել խփողները։ Մի հոգի սպանված է, մէկը վիրաւոր, իսկ երրորդին կօզակների օֆիցէր Դրագոմիրովը բարեհաճել է հրամայել կենդանի բռնել... Իսկ կօզակները բացասրել են, որ գնդակները եկան ս. Դաւիթի սարից... Ով յիմար է, թող հաւատայ։

Մի կողմից թուրքերի յարձակման լուրը, միւս կողմից կօզակների այդ խուլիգանական վարմունքը սարսափելի իրարանցում գցեցին ժողովրդի մէջ։ Ամբոխն սկսեց փախչել աջ ու ձախ... Ոչ ոք չը գիտէր, թէ վաղնդը որտեղից է և ուր պէտք է փախչել։

Շտապեցի կուսի վայրը։

Բոլոր դիրքերից, բոլոր տներից, լուսամուտներից, դռներից, բօռանիքական բլրից, Հաւաբարի ու Մէյտեխի բարձունքներից սուլում, ֆշֆշում էին գնդակները։

Դեռ օրը չը մթնած, Ալբի մէյդանը բացվող փողոցների բերանները սկսեցին զօրքերն ու բոլոր կռող ուժերը, գլխաւորապէս դաշնակցականների զեկավարութեամբ, բարրիկադներ կապել... Տեսարանը վեհ էր և հրաշալի. մարդիկ, կուլտուրական ուժերը, սիրտ-սրտի տուած կռիւ էին դուրս եկել մութ հրէշի, բռկակցիայի գործէք թուրքական աւազակաբարոյ տարրերի դէմ։ Դա լոյս էր, որ կռուում էր խաւարի դէմ, դա ազատաբար շարժումն էր, որ գնդակոծում էր բռկակցիայի շնական ոյժը։

Թուրքերը կրակում էին ոչ պակաս թափով։ Դողում էր մայր-երկիրը...

Մինչև գիշերվայ 12—1-ը մնացի կուղնների մօտ, «արեան դաշտում»—ի հարկէ լոկ հանդիսատես, ամենաշատ—լոկ դիտող...

Հրազգութիւնը երկու կողմից էլ շարունակվեց ամբողջ գիշերը։ Մերոնք կռվում էին փոզոցների բերաններից, բաց դաշտում, իսկ թուրքերը միայն լուսամուտների ծակերից։

Որքան սպանված, որքան վիրաւոր եղաւ—յայտնի չէ։ Մեր կողմից այն էր, ինչ որ գրեցի. դաւաճանօրէն սպանել էին ժամը 4-ին 1, վիրաւորել 2 հոգի սոցիալ-դեմոկրատներից։ Այլ ևս ոչ մի կորուստ մինչ լոյս։

Չեմ կարող խորին զմայլանքս չըյայտնել ընկեր Սիլվէստրին, որ սպիտակ զրօշը բարձրանած, կանգնել էր անզէն, առանց մի տաբատանի անգամ՝ Ալբի մէյդանի ուղիղ բերանին, թուրք աւազակների գնդակների դիմաց։ Հերոսաբար նա աջ ու ձախ էր շարժվում, ման էր գալիս իր խակպէս խաղաղարար և խաղաղասէր գնդի առաջ... Դեղեցիկ էր ընկեր Սիլվէստրը այդ բօպէին—նա ֆանատիկոս էր, միայն հոգեկան հսկայական ուժով...

Միամիտ էր առհասարակ սոցիալ-դեմոկրատիայի խաղացած դերը. դա արդիւնք էր այն բանի, որ նրանք չէին ճանաչում թուրք տարրի, գոնէ նրա հսկայական մեծամասնութեան հոգին... Նրանք ուզում էին «բարոյապէս ազդել» այդ տարրի վրա, մոռանալով, որ բարոյապէս ազդելը պահանջում է տարիներ և նոյն իսկ դարեր...

Բայց եթէ աչքի առաջ չունենանք կուսակցութեան այդ ֆանատիկոս տեսակէտը, միւս բոլոր խնդիրներում սոցիալ-դեմոկրատիայի վարմունքն այդ 2—3 «խաղաղարարական հրացանակիր օրերում» միանգամայն գովեստի է արժանի։ Նրանք որոշ նպատակ դրին և հաւատարիմ մնացին այդ նպատակին։ Միայն այժմ պէտք է տեսնել, թէ նրանք որքան հաւատարիմ կը մնան Դաշնակցութեան և իրանց տարուգրած դաշինքին, որը յայտարարում է. «Եթէ որ և է կողմը յարձակվի, ներս խուժէ, կոտորած ու կողոպուտ առաջացնէ, ս.-դէմոկրատիան պէտք է կռվի դաշնակցականների շարքերում՝ յարձակվող կողմի դէմ։»

Խաժակ

ԳԱՆՁԱԿԻ ԴԷՊՔԵՐԸ

—

Նոյեմբերի 23-ին

Նոյեմբերի 18-ը մի գեղեցիկ, լուսաճաճանց օր էր. հարաւի արեգակը իր հառագայթները վաղ առաւօտվանից առատութեամբ սփռում էր մի շէն, վերջի տասնամեակների կուլտուրական աշխատանքի շնորհիվ հաղթ տոքի կանգնած, բարեկարգված քաղաքի վրա, որին վիճակված էր էկսօրից մօտիկ կատարեալ դժոխք դառնալ։ Ժամի 10 և էկսին հայ ժողովրդի ու ինտելիգենցիայի երկարամեայ ջանքերով, արդիւնաւէտ կուլտուրական աշխատանքի շնորհիվ եւրոպականութեան կնիք ստացած, Կովկասի բարեկարգ քաղաքների շարքն անցած Գանձակը քայքայվեց, քանդվեց, կորցրեց տարիների ընթացքում խնայած, յամառ աշխատանքով ձեռք բերած հարստութիւնը վայրագ թաթար ամբոխի շնորհիվ։

Այդ օրը, նոյեմբերի 18-ին, նշանակված էր Գանձակում՝ քաղաքական միտինգ, առաջինը մեր զժբաղդ քաղաքում հռչակաւոր «ազատութիւնները» յայտարարելուց յետոյ։ Միտինգին պէտք է մասնակցէր նաև թուրք ամբոխը իր ինտելիգենտներով, որոնցից մի քանիսը յամառութեամբ պնդում էին միտինգների անհրաժեշտութեան վրա երկու ազգութիւնները սիրտ կապերով միացնելու համար։ Նրանք նախընթաց օրը, նոյեմբերի 17-ին, ասում էին, որ իրանց ժողովուրդը իր ինտելիգենտներով ամբողջովին գալու է միտինգի վայրը, քաղաքային դպրոցի հայաթը, ու պահանջում էին, որ հայերն էլ նոյնն անեն, մեծ բազմութեամբ գան միտինգին։

Առաւօտեան, նոյեմբերի 18-ին, ժամի 8-ին, չարագուշակ լուրեր տարածվեցին. յայտնվեց, որ հայոց քաղաքամասի ծայրում, «Դիք-Բիւշա» փողոցի գլխին երկու թուրքի դիակ են գտնվել։ կարծում էին, թէ հայերը կը լինեն կատարած այդ սպանութիւնը. բայց շուտով պարզվեց, որ թուրքերն են նրանց սպանողները, որովհետև նրանց մօտ բաւականին փող է եղել, կողոպտելու նպատակով։ Այդ յայտնում է գանձակեցի Սերգէյ Աւշրանցին մի թուղթ, Թօփալ-Հասանլու գիւղացի, որը սպանվածների ընկերն է լինում ու փախուստով ազատվում է մահից։

Երբ պարզվեց, որ այդ սպանութիւնը կատարել են թուրքերը, հայերը հանդիսա գնացին քաղաք ու ձեռնամուխ եղան իրանց սովորական աշխատանքին, չենթադրելով թուրքերի կողմից որ և է թշնամական քայլ։ Եւ անա այն ժամին, երբ քաղաքային դպրոցի բակում պէտք է սկսվեր միտինգը, որին մասնակցելու համար թուրքերից ոչ ոք չէր եկել հակառակ նրանց խոստման, բաղարում սկսվեց չարագուշակ հրացանաձգութիւն. «ըստ կվեց, սկսվեց» ձայն տուին շատերը ու վազեցին դէս ու դէն. իրարանցումն իսկոյն ընկաւ քաղաքի մէջ. խանութներն սկսեցին շտապով փակել. կառքերը դէս ու դէն սլացան. բազարի կողմից երևաց փախչող անզէն ամբոխը, որի եռեից անդադար պայթում էին հրացաններ ու ատրճանակներ։ Հայոց մասում էլ սկսվեց հրացանաձգութիւն թուրք ամբոխի ու հրուակների ներս խուժման առաջն առնելու համար։ Հայոց քաղաքամասին կից գտնվող Զայլու ու Մօլլա-Զալլու թուրք թաղերի ամբոխը փորձեց իսկոյն և եթ ներս խուժել հայերի մասը, բայց յետ մղվեց հայ կորիւնների ձեռքով, որոնք դէպքն սկսվելուն պէս գրաւեցին իրանց դիրքերը ու այդպիսով առան վայրագ թաթար խուժանի առաջը։

Դատանք այժմ ականատեսների պատմութիւններին բաղարում տեղի ունեցած մինչև-դարեան գազանութիւնների մասին։ Պատմում են հետևեալը՝ «Առաւօտեան գնացինք բաղար բացինք խանութները, սկսեցինք մեր սովորական գործը։ Մինչև ժամի 9½-ը չարագուշակ ոչինչ չէր նկատվում. թուրքերը հանգիստ, խաղաղ դէս ու դէն էին գնում. զրօնով չէին զբաղված, քանի որ օրը ուրբաթ էր, կիրակի նրանց համար, թուրքերի խանութները փակ էին։ Ժամի 9-ի էկսից սկսած թուրքերը խմբվել սկսեցին մզկիթի առաջ գտնվող այգում. յետոյ խմբերով մտան մզկիթը. այնտեղ մի քանի րոպէ մնալուց յետոյ դուրս եկան, ու գնացին գանազան ուղղութեամբ։ Այդ րոպէին հայ զարգարների, ոսկերիչների արհեստանոցների շարքերի առաջ յանկարծակի լսվեցին հրացանների ու ատրճանակների ձայներ, ու թափվեց իր արդար աշխատանքին նուիրված հայ արհեստաւորի արիւնը։ Սկսվեց սոսկալի ազմուկ, իրարանցում, հարայհրոց. ընդարձակ բազարի ամբողջ տարածութեան վրա, կից փողոցներում ու հրապարակներում, անարի կուսակցութիւնը պայթում էին անընդհատ, անվնաս, տմարդի յարձակման ենթարկված հայերի գլխներն ընկնում էին այս ու այնտեղ, շտաբերն սպանում էին դաշտնոներով, անընդհատ լսվում էին՝ «ադա, վուր (խփի), եա Ա.-լի» կատաղի ազաղակները. գնալով սպանվեցին թուրք ամբոխի թիւն ուեանում էր, թուրքական քաղաքամասի զանազան թաղերից գալիս էին հրացանաւորների նորանոր խմբեր. խուժանի անդուսպ վայրագութեան չափ ու սահման չը կար, կոտորում էին հայերին անխտիր, չէին խնայում ոչ ոքի. երեք-բամեայ անմեղական ծանօթութիւնն անգամ, մխսին կերած աղ ու հացը, չէր փրկում մահից։ Բոլոր նշաններից երևում էր, որ թուրքերը ներդնչված են կոտորել անխիր բոլոր հայերին, ոչ ոքի չը խնայել, դրա մէջ նրանք տեսնում էին մեծ գործ, մի տեսակ կրօնական արարողութիւն, Մահմեդի դրախտը տանող, յաւիտենական երջանկութեան հասցնող։ Կոտրածն սկսվելուն պէս հայերն ստիպված եղան թողնել խանութները բաց ու մտածել միմիայն իրանց կեանքի փրկութեան մասին. փախչում էին, շատերը փախչելիս ընկնում, շատերն ազատվում մի կերպ, ազատվում հրաշքով, պատսպարվելով պօղվանների, անայտ նկուղներում։ Բշանութեան ու զօրքի կողմից սկզբում ոչ մի պաշտպանութիւն չը կար. սկզբի սոսկալի մօմենտներում նրանք բոլորովին չէին երևում. եկան դէպքի վայրը էկս ժամից յետոյ ու այն էլ միայն հանիսաsես լինելու համար սպանութիւնների ու կողոպուտին... Սպանվողներն ու կողոպտվողներն դիմում էին հազագիւտ զինուորներին ու կազակներին (զօրք շատ քիչ էր ուղարկած դէպքի վայրը) ու աղերսում օգնութիւն, փրկութիւն, բայց լսում՝ «нѣмъ не приказано стрѣлять» (մեզ չէ հրամայված կրակել), «радъ, голубчикъ, помочь, да не могу, не приказано» (ուրախ եմ, աղաւնեակ, օգնել, կայց չեմ կարող, չէ հրամայված), «руки связаны» (ձեռքերս կապած են)... հանիսաsես զօրքի շարքերում, հասարակ զինուորների մէջ, լսվում էին այսպիսի դարձուածքներ՝ «Эхъ черты, вишь, что дѣлаютъ проклятые, бьютъ нашихъ братьевъ православныхъ христіанъ, а намъ генералъ-губернаторъ не велитъ стрѣлять...» (էհ, սատանաներ, տեսնում էք ինչ են անում անիծվածները քրիստոնեաներին, իսկ մեզ գեներալ-նահանգապետը չէ հրամայում կրակել...) Խուժանների կողոպուտը սկսվեց միաժամանակ կոտրածի հետ, կողոպտում, տանում էին անարգել, հայերի ապրանքը կըրում էին փուրգօններով, ջորիներով, ձիաներով, էշերով. կողոպտման մասնակցում էին նոյն իսկ թուրք կանայք, երեխաներ, կողոպտում էին ամենավայրագ կերպով, շատ բան դէս ու դէն շպրտելով, կոտրատելով, փշրելով, հոհոալով...

Ստ. Տէր-Աւետիքեան

(Կը շարունակվի)

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԻՍՏԸ ԴՈՒՄԱՅՈՒՄ

—

Երէկ գիշեր, երկաթուղու գծերի ծառայողները՝ նկատի ունենալով թուրքերի անընդհատ յարձակումները գծի վրա, սպանութիւնները, աւերումները ու թալանները, մի խօսքով նորմալ կեանքի դէմ ի վայր շրջումը, նախաձեռնակ էին եղել մի ժողով գումարելու Թիֆլիսի քաղաքային Դումայում։ Դուման լիքն էր հայ, վրացի և ռուս ժողովականներով։ Թուրքերի կողմից եկել էին երկու ներկայացուցիչ, փոխ-գնդապետ Վէզիրով և մի խան, Երանից։ Նախագահում էր մի ռուս, երկաթուղու ծառայող Երմօլաև։

Երկաթուղու ծառայողները առաջարկում էին հետևեալ միջոցը, որ թուրքերին խմացող մարդիկ ընկնեն թրքարնակ գիւղերն ու քաղաքին նրանց խաղաղութիւն, ցոյց տալով մնացած յուզմունքների վատակարութիւնը բոլոր ազգութիւնների համար։

Այդ գաղափարական առաջարկը միամիտ էր, որովհետև մինչև այժմ կեանքի փորձը ցոյց տուեց, որ խաղաղ, բարոյական միջոցները միանգամայն անզօր են մահմեդականների մէջ կարգ հաստատելու, այդ առաջարկը մեծամասնութեան կողմից անբաւարար համարվեց։ Ոմանք պնդում էին զինման մասին, խիստ գործողութիւններ սկսելու մասին, յանցաւոր թուրքերի դէմ։ Ուրիշներ առաջարկում էին քննել անկարգութիւնների շարժառիթները և նրա համեմատ ձեռք առնել միջոցներ։ Այդ շարժառիթներից մէջ նեռվից դարձեալ անտեսական ճնշումը իբրև թէ հայերի կողմից։

Ճառախօսներից մէկը շեշտեց, որ եթէ տնտեսական ճնշում կայ, այդ բէգերի, խաների և աղալարների կողմից է միայն. այդ թուրք մեծամեծները՝ տգէտ ժողովրդի դժգոհութիւնը իրանցից հեռացնելու համար, ուղղում են հայերի դէմ. հետևաբար պէտք է միջոցներ ձեռք առնել այդ խաների և բէգերի դէմ։

Թուրք ներկայացուցիչներից մէկը, փոխգնդապետ Վէզիրովն, զինման հարցին հակառակից և որոշ էֆֆէկտ գործեց յայտարարելով, որ մահմեդականները Կովկասում շատ են, եթէ միայն Դաղստանը ոտքի կանգնի բաւական է։

Վիճաբանութիւնը շարունակվեց երկար, զանազան առաջարկութիւնների ջատագովումով, որոնցից, պէտք է ասել, ոչ մէկը արդիւնաւոր չի լինիլ, քանի որ իշխանութիւնները իրանց կողմից չեն աշխատում նպատակայարմար միջոցներ ձեռք առնել, դադարեցնելու համար այս ամօթալի ու ամբողջ մարդութեան համար նախատական անկարգութիւնները։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անդրիովկասի Շէյխ-ուլ-իսլամը երէկ մի առանձին գրութեամբ դիմել է ամենայն հայոց Վեհ. Կաթողիկոսին, որով ցաւ է յայտնում, որ Կաթողիկոսի ներկայութիւնը նոյն իսկ չը կարողացաւ զսպել հայերին յարձակումներ գործել և այդ յարձակումների պատճառով էլ նա, Շէյխ-ուլ-իսլամը չէ կարողանում դուրս գալ իր հօտի մօտ և քարոզելու, յորդորելու նրանց չը յուզվել և հանդարտվել, իսկ եկած գիւղացի թուրքերին վերադառնալ իրանց տեղերը։

Այդ դիպլոմատիական գրութեան տրված պատասխանը Վեհ. Կաթողիկոսի կողմից հաստատում է, որ երբէք հայերը նախայարձակ չեն եղել, յարձակումներ չեն գործում, այլ միայն պաշտպանվում են թուրքերի յարձակումներից, որոնց օգնութեան են եկել և գիւղերից։

—

Նոյեմբերի 18-ին Ցարսկօէ-Սելօյում հերթական միւս հարցերի թեռմ զեկուցում տրվեց նաև Գիտական Դումայի մասին։ Խորհրդում լսել են ընդհանուր, հաւասար, գաղտնի, բայց ոչ ուղղակի ձայնաւորութիւն մտցնելու հնարաւորութեան մասին։ (Р. В.)։

—

Երէկ, նոյեմբերի 29-ին, Թիֆլիսի կայարանից քաղաք են մտնում 10 հոգի զինված թուրքեր Ղօրմանեանի ձեռքով։ Հասնելով էլեկտրաքարշին, թուրքերից մէկը, մնալով վագոն, կրակում է ատրճանակը խմբված հայերի վրա և, կարծեմ, վիրաւորում անցորդներից մէկին։ Հայերն էլ կրակ են բաց անում և սպանում ու վիրաւորում նրանցից 4-ին, իսկ մի քանիսը փախչում մտնում են մօտ